



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան
անդրադառնալ ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության
համար:**

1 №1 ձևի անասնաբուժական վկայականը տրվում է՝ (1 միավոր)

- 1) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող հումքի (բուրդ, մորթեղեն, մազ, փետուրներ, էնդոկրիին գեղձեր, աղիքներ) համար:
- 2) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող կերերի (լրացակերեր, մսալյուր, ոսկրալյուր) համար:
- 3) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանիների, բեղմնավորված ձկնկիթի, ինկուբացիոն ձվի, սերմնահեղուկի համար:
- 4) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքի (մսի, կաթի, ձվի, մեղրի) համար:

2 Անասնաբուժական գրանցման ինչպիսի՞ մատյան չկա: (1 միավոր)

- 1) ոչ վարակիչ հիվանդությունների
- 2) կենդանիների զբոսանքի
- 3) հակահամաճարակային
- 4) համաճարակային

3 Ո՞ր կենդանիներն են խլախտով հիվանդանում: (1 միավոր)

- 1) ձիերը
- 2) խոզերը
- 3) խոշոր եղջերավորները
- 4) մանր եղջերավորները

4 Ո՞ր տարբերակում են 2 երևույթներն էլ համապատասխանում դաբաղ հիվանդությանը և նրա հարուցիչին: (1 միավոր)

- 1) ցածր վարակելիություն, բարձր մահացություն
- 2) ցածր վարակելիություն, ցածր մահացություն
- 3) բարձր վարակելիություն, բարձր մահացություն
- 4) բարձր վարակելիություն, ցածր մահացություն

5 Հետևյալներից ո՞րն է համարվում վարակիչ հիվանդությունների բուժման լավագույն միջոցը: (1 միավոր)

- 1) մեծ քանակի թորած ջուր խմեցնելը
- 2) վիտամինային բուժումը
- 3) գերիմուն շիճուկի ենթամաշկային ներարկումը
- 4) ֆիզիոլոգիական լուծույթի ներերարկային ներարկումը

6 Հետևյալներից, ո՞րը համաճարակային պրոցեսի զարգացման պարբերականության փուլ չէ: (1 միավոր)

- 1) հիվանդության դեպքերի քանակի նվազումը
- 2) հիվանդության իսպառ վերացումը
- 3) հիվանդության դեպքերի ավելացումը
- 4) հիվանդության դեպքերի զարգացման կուլմինացիոն կետը

7 Տրված հիվանդություններից ո՞րի հարուցիչը հողային չէ: (1 միավոր)

- 1) բոտուլիզմի
- 2) կոլիբակտերիոզի
- 3) սիբիրախտի
- 4) փայտացման

8 Հետևյալներից ո՞րն է համարվում կենդանիների վարակիչ հիվանդությունների առանձնահատուկ կանխարգելման միջոցառում: (1 միավոր)

- 1) որոշ ժամանակով չշահագործումը
- 2) մեկուսացումը
- 3) հատուկ եղանակով կերակրումը
- 4) պատվաստումը

9 Հետևյալներից ո՞րը համաճարակային օջախի տեսակ չէ: (1 միավոր)

- 1) բնական
- 2) փոփոխական
- 3) հանգչող
- 4) ստացիոնար

10 Տարբեր տեսակի ձկների համատեղ բուժման դեպքում դրանց ո՞ր առանձնահատկությունը հաշվի չի առնվում: (1 միավոր)

- 1) տարիքային
- 2) սեռային
- 3) սննդային
- 4) տեսակային

11 Ո՞րը մեղուների հիվանդությունն չէ: (1 միավոր)

- 1) պիեմիան
- 2) պարկավոր մեղվատորդը
- 3) ամերիկյան փտախտը
- 4) նոզեմատոզը

12 Հետևյալներից ո՞րը հելմինթոսոլուկոպիկ մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) Դառլինգի
- 2) Քալանթարյանի
- 3) Վայդի
- 4) Ֆյուլերոնի

13 Դիսպանսերացումը՝ (1 միավոր)

- 1) պլանային կարգով անցկացվող ախտորոշիչ, բուժկանխարգելիչ միջոցառումներ են:
- 2) հյուսվածքաբանական հետազոտություններ են:
- 3) վերքի մանրազնին հետազոտություն է:
- 4) եզրակացություն է հիվանդության ելքի մասին:

14 Ի՞նչ է կոչվում բարակ աղիքների կերպանգվածի կանգը: (1 միավոր)

- 1) խիմոստագ
- 2) խոլիստագ
- 3) կոպրոստագ
- 4) լիմֆոստագ

15 Ո՞րը բրոնխոպնևմոնիային բնորոշ ախտանիշ չէ: (1 միավոր)

- 1) սիրտանոթային անբավարարվածությունը
- 2) լորձաթաղանթների դեղնությունը
- 3) չոր կամ խոնավ հազը, խզզոցը
- 4) շնչահեղձությունը

16 Հետևյալներից ո՞րին է բնորոշ ցավագին միզարտազատությունը: (1 միավոր)

- 1) էնդոմետրիտին
- 2) նեֆրիտին
- 3) նեֆրոսկլերոզին
- 4) ուրոցիստիտին

17 Ո՞ր կենդանու հղիության միջին տևողություն է 340 օր: (1 միավոր)

- 1) գամբիկի
- 2) ուղտի
- 3) կովի
- 4) գոմեշի

18 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված ծննդաբերության հաջորդականությունը: (1 միավոր)

1. արգանդի վզիկի բացում, 2. ընկերքային փուլ, 3. պտղի արտաքսում

- 1) 1, 3, 2
- 2) 3, 2, 1
- 3) 1, 2, 3
- 4) 2, 1, 3

19 Ինչպե՞ս են վարվում պայմանական պիտանի մսեղիքի հետ: (1 միավոր)

- 1) վերամշակում են
- 2) բաց են թողնում վաճառքի առանց սահմանափակումների
- 3) օգտահանում են
- 4) այրում են

20 Ըստ վիճակագրական տվյալների՝ հետևյալ կենդանական տեսակներից ո՞րի ցիստիցերկոզով վարակված մսեղիքից է մարդն առավել հաճախ վարակվում: (1 միավոր)

- 1) ոչխարի
- 2) ճագարի
- 3) տավարի
- 4) խոզի

21 Հետևյալներից ո՞րն ախտահանության մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) Ֆիզիկական
- 2) կենսաբանական
- 3) քիմիական
- 4) կարանտինացման

22 Հետևյալներից ո՞րն է դեղանյութերի ներմուծման պարենտերալ ուղին: (1 միավոր)

- 1) ենթամաշկային
- 2) ուղիղ աղիքային
- 3) բերանային
- 4) ենթալեզվային

23 Մենդանյութերի այն քանակությունը, որը նախատեսված է կենդանու մեկ օրվա պահանջը բավարարելու համար կոչվում է՝ (1 միավոր)

- 1) կերակրման նորմա
- 2) բտում
- 3) սնուցում
- 4) կենսաբանական ակտիվություն

24 Ինչո՞վ է պատված ոսկորի արտաքին մակերեսը: (1 միավոր)

- 1) ֆիբրոզային թիթեղներով
- 2) սպունգաձև նյութով
- 3) աճառային հյուսվածքով
- 4) շարակցահյուսվածքային ամուր շապիկով

25 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված որոճողների կրծքային վերջույթների հետևյալ հոդերի տեղադրման հաջորդականությունը: (1 միավոր)

1. արմունկ, 2. կապ, 3. պսակ, 4. դաստակ

- 1) 1, 4, 2, 3
- 2) 4, 2, 3, 1
- 3) 1, 2, 3, 4
- 4) 2, 1, 4, 3

26 Ո՞ր հորմոնն է կարգավորում վահանազեղձի ֆունկցիան: (1 միավոր)

- 1) օքսիտոցին
- 2) թիրեոտրոպ
- 3) ադրենոկորտիկոտրոպ
- 4) պրոլակտին

27 Ի՞նչ է ռեֆլեքսը: (1 միավոր)

- 1) Գրգռիչի ազդման պահից մինչև պատասխան ռեակցիան ընկած ժամանակն է:
- 2) Նյարդային բջիջների ընդհանուր գործնեությունն է:
- 3) Ընկալչական դաշտը կազմող ընկալիչների միագումարումն է:
- 4) Օրգանիզմի պատասխան ռեակցիան է գրգռիչների նկատմամբ:

28 Հետևյալներից ո՞րն է մարսողական օրգանների տեղադրման ճիշտ հաջորդականությունը: (1 միավոր)

1. բարակ աղիք, 2. ըմպան, 3. հաստ աղիք, 4. ստամոքս

- 1) 4, 1, 2, 3
- 2) 2, 4, 1, 3
- 3) 2, 4, 3, 1
- 4) 4, 2, 1, 3

29 Ո՞ր դեպքում է դրվում պատուհանավոր զիպսային կապ: (1 միավոր)

- 1) ոսկրահողախտի
- 2) օստեոարթրոզի
- 3) բաց կոտրվածքի
- 4) սալջարդի

30 Հետևյալներից, ո՞րը դեկորատիվ կենդանի չէ: (1 միավոր)

- 1) ծովախոզուկը
- 2) ճահճային առնետը
- 3) գերմանական մուկը
- 4) շինշիլան

31 Կենդանիների հետևյալ 3 հիվանդությունների հարուցիչները *չեն* փոխանցվում մարդուն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. մաշկի հանգուցային բորբոքման (նոդուլար)
2. սալմոնելոզի
3. սիբիրախտի
4. բրուցելոզի
5. աֆրիկյան ժանտախտի
6. տուբերկուլոզի
7. խշխշան պալարի

32 Տրված հատկանիշներից 3-ը *չեն* վերաբերում խշխշան պալարի հարուցիչին: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. սպորավոր
2. պատիճավոր
3. պարուրաձև
4. անաերոբ
5. հողային
6. մտրակավոր
7. գրամ դրական

33 Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդություններ *չեն* կարող ախտորոշվել: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. շոշափման
2. մանրէաբանական
3. համաճարակաբանական
4. ուլտաձայնային
5. շիճուկաբանական
6. բախման
7. վիրուսաբանական

34 **Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդությունների հարուցիչները չեն թափանցում կենդանու օրգանիզմ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. բերանային
2. քրտնագեղձի
3. շնչուղիներով
4. միզուղիներով
5. սեռական
6. վերամշակային
7. եղջրանյութի

35 **Տրվածներից 3-ը արու կենդանիներին ամորձատելու եղանակներ չեն: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կենսաբանական
2. խարելով
3. բաց
4. արյունային
5. քիմիական
6. ճառագայթային
7. մեխանիկական

36 **Տրվածներից 3-ը սիբիրախտով կասկածվող մսեղիքի հետ սպանդի ընթացքում վարվելու վերաբերյալ ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Մսեղիքը վերամշակում են կերակրի աղի միջոցով:
2. Ոչնչացնում են մսեղիքը այրման միջոցով:
3. Ուղարկում են օգտահանության:
4. Վերցվում են կենսասնմուշներ և ուղարկում են լաբորատոր հետազոտության:
5. Մսեղիքը տեղափոխում են խորը սառեցման:
6. Դադարեցնում են սպանդը:
7. Մսեղիքը ջերմամշակում են:

37 **Տրվածներից 3-ը մաստիսների տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. դերմատիտային
2. հետաճ
3. կատարային
4. ինդուրացիոն
5. թարախային
6. գանգրենային
7. ֆիբրինոզային

38 **Վիժաճ պտուղները համարվում են ախտաբանական նյութ, եթե կենդանիները հիվանդանում են հետևյալ հիվանդություններից 3-ով: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. բոտուլիզմ
2. լեպտոսպիրոզ
3. բրուցելոզ
4. խշխշան պալար
5. պաստերելոզ
6. կամպիլոբակտերիոզ
7. կատաղություն

39 **Հետևյալ վիրուսային հիվանդություններից 3-ով կարող են վարակվել հավերը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. մարեկով
2. պաստերելոզով
3. գրիպով
4. լեյկոզով
5. սալմոնելոզով
6. կոլիբակտերիոզով
7. միկոպլազմոզով

Հետևյալներից 3-ի վնասագերծման նպատակով կիրառվում է իվերմեկտին պատրաստուկը: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. արոտային տզերի
2. նախակենդանիների
3. միկրոֆների
4. վիրուսների
5. կլոր որդերի
6. քոսի տզերի
7. սնկերի